

ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅԱ

ՊԱՏՄԱԿԱՆ Վ.Է.Պ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԴԱՐՈՒ

—*—

ԳԼՈՒԽ Գ.

(Ժես յ'էջ 125)



Հոմեախանոս սովորաբար Ներոնի թու կեզծեալ տունը կը բնակէր . սրուն Պալատին անունը տուած էին , որով հետեւ շինուած էր Պալատինեան լեռան վրայ , ինչպէս Օգոստոսի և Տիբերիոսի պալատները :

Հոռվիւական մեծութենէն մնացած աւերակաց բեկորները՝ փիլիսոփային կը ներշնչեն գերազոյն զգացում մի՝ արհամարհնելու մարդկային ամենայն գործերը : Աշխարհի վրայ աւմենայն ինչ անցաւոր է : Մարդիկ կը ծնանին կը փայլին պահ մի , յետոյ ժամանակին անողոքիլ ձեռքը կը ծանրանայ իրենց վըրայ , կ'ոչնացնէ զանոնք , և իրենցմէ ուրիշ բան չի մնար , բայց եթէ կործանելու մօտ մի քանի պատճեր , և անուն մի՝ որ ո՞ւ և է կերպիւ կարողացած է երևելի լինել պատմութեան մէջ : Եւ տակայն , մինչև մէկ աստիճան , ժամանակն , այն անցազ աւերիչն , աւելի կը յարգէ դարը քան թէ մարդկան մնացորդը . մեծամեծ աշխարհակալաց աճիւնն կը խառնուի հոգուն հետ , այնպէս որ անկարելի կ'ըլլայ զանազանել իրաբուէ , և իրենց բնակութեանց աւերակները գարերով կը պահուին՝ կարծես զեւ ցուցնելով : այն աւեղբը՝ ուր կը բարձրանային ժամանակաւ : Ո՞վ ունայնութիւն մարդկային՝ հպարտու

թեան : Կայսերաց աճիւնք չեն զանազանուիր ամենայետին առմկին անբւնեն , և շատ անգամ՝ մշակի մը բրիչն մեծ թափաւորի մի ուկիրը խորսակեց . . . :

Այն օրուան հետուեալ օրը , յորում ֆլորնիս ազատուեր էր ցանցամարտ Պարիսու ձեռքով , չափանաս մարդ մի կը հաներ 'ի պալատն , որ անցնելով լիլիսարի արձաններով զարդարուած զամերին միջէն , կանգ առաւ շենք սրահի մը մէջ իսուելու համար հասարակ գէմինով մարզու մը հետ , որը դումետիանուի մաներիմ ազատապիր Պարմենուն էր :

— Հո՞ն է , հարցուց նորեկն՝ որց դու մը ցուցնելով :

— Այս՝ Սաեփանաս , հոն է և ըստ իւր սովորութեան կ'աշխատի զՀոռվիւ հանգստացը ընելու : Յիսուսի , աւելցուց յետոյ ծաղրական շեշախի , եթէ կեսար ժամանակ մի ևս այս պէս առաջ երթայ . Հոռվիայ քաղաքացիք շատ բարեբաղդ պիտի ըլլան , այլ ևս ճանճերէն չպիտի նեղուին :

Սաեփանոս մպտեցաւ , յետոյ սաից ծայրին վրայ յառաջելով՝ միսաւ լրաբեսլ զԴումետիանոս վրան ճեղքաւածներէն :

Կայսրն սրահին մէջ էր , ուր կ'անցունէր իւր պնդաղ ժամանակին մեծագյուն մասը , ինքընքը անդութ զտարձութեանց ապառու:

թէպէտե այլ ևս կինաց գարնան մէջ չէր, սակայն իւր առնական զեղեցկութիւնն զեռ կորուած չէր, զէմքն կանոնաւոր էր, հասակն բարձր և վայելուց բայց բարակ շրմներով քերանն ճաղրական բան մ'ունէր իւր մէջ: Անձնասիրութիւնն շատ վաստած էր իւր ճաղատ լինելովը, ինչպէս նաև կ'աւանդէ մեզ Յորնաղ, որ անարգական անուամբ զնա ճաղատն Ներան կը կոչէ: Իւր այտերն, ընդհանրապէս գունատ, թեմի մի կը գունաւորէին հասարակաց առջն խօսելու միջոց, և այս բանս առիթ կու տար իրեն պարծելու իւր համեստոթեան վրայ մինչև իսկ ծերակիցտիւն առջեւ: սակայն իւր սովորութիւններն կը հերքէին պարկեշտ արտաքինը, և այն կարմը-րութիւնն, ինչպէս կ'ըսէ Տափտոս, ամօթոյ ցոյց մ'էր, որ չէր կրնար ուրիշ կերպով ՚ի յայտ զալ:

Որդի էր վեսպաֆիանոսի՝ և եղբայր Տիտոսի, ո՛չ միտյն բարեսրութիւնը և ոչ միւս սին սպազ մեծութիւնը ունէր: Խօսա, անձնասէր, չափազանց ծզլ. իւր բարձր ասախնին յարմար լու յասոկութիւններէն և ոչ մին ունէր, այլ ընդ հակառակն օժտուած էր բռնաւորաց յասոսկ տեսակ տեսակ ախտերով: Իւր երիտասարդութեան ատեն սիրած էր գիտութիւններ և գեղեցիկ զպրութիւնները: Կայսր Եղաս, բոլորովին ձգեց զանոնց և զրադեցաւ Տիերերսոսի յիշասակարաններով, անոր անզթութիւնները ուսումնասիրելու: Եթէ ճոխացուց պալատան զրատունները, աւելի սրանինը գեղեցկացնելու համար էր՝ քան թէ մոտաւորական ուսմանց ճաշակ ունենալուն:

Սահեփանոսի դիտած սենեկակն փոքր էր, սակայն Հռոմայիցուց զեղին ճմխութեամբ զարդարուած: Դրմետիանոս մէջտեղը կեցեր էր: ոսկեթել բանուած արմաններով զարզարուած պատմուճանին վրայէն. հագօծ էր սակեհիս պարեգոր, զոր միայն յաղթականց կրնային կրել, նա ընաւ չէր հաներ այն զգեստը Դաշիացուց վրայ տարած շինուու յաղթանակին համար. վիզը երկարած, աշքերը սենեկան պատմուճանին վրայէն. հագօծ էր սակեհիս պարեգոր, զոր միայն յաղթականց կրնային կրել, նա ընաւ չէր հաներ այն զգեստը Դաշիացուց վրայ տարած շինուու յաղթանակին համար. վիզը երկարած, աշքերը սենեկան պատմուճանին վրայէն. ինչ կը դիմակ անշարժ և այլայլած, ի՞նչ կը դիմակ անշարժ և այլայլած, ի՞նչ կը դիմակ անշարժ և այլայլած:

առածունուուն հակտին վրայ, ուրախութեամբ ցնցելով իւր թափանցիկ փոքր թեւերը, առանց կասկածելու թէ մահն իրեն կը սպասէր:

Յանկարծ, Դրմետիանոս դէպ ՚ի արձանը վաղեց, և արագ բազկի շարժում մի գործելալ, վանեց փոքրիկ անասունը, որ թըռաշելու միջոցին բռնուեցաւ կայսեր կիսախուփ ափին մէջ:

— Բանուեցար, կէ, զոշեց նա ապուշ ծիծաղով մը:

Ցեայ, փրցուց անոր թեւերը, ծակեց զնամառեղով մը, և մարմարեայ սեղանի մը վրայ նետելով, զնաց դարաննեցաւ ուրիշ մի գրալու, որ նոյն պահուն արձանին զըլիուն վերև կը թռչուէր:

Եթէ խորին գիմազէտ մի կարենար տեսանել, թէ ի՞նչպէս կը գուարնանար Դրմետիանոս այս ստահակի մը անվայել խաղով, անշուշա պիտի մատծեր, թէ ինչպէս իւր կայսերական պալատը մանոնդ ճանճերուն՝ հաւասարապէս մարդկան նկատմամբ ալ անգութ պիտի ըլլար, և պիտի չի սիսալեր: Յիրաւի: Ներոնի: պէս անպիտան, կայիզուայի պէս անկարգ, Տիերերսոսի կեղծաւոր անզթութիւնն ալ ունէր, և երջանիկ կ'ըլլար ոչ միայն իւր զոհերուն մեռնիլը՝ այլ և անոնց արտասուաց հուումը տեսնելով:

Զուարձութիւնն սակաւ մի ևս տեսեց, յետոյ Դրմետիանոս սեղանին մօտեցաւ, և իւր զնամառեղով համբելով ճանճերը,

ըսաւ գոհունակ մպիտովլ.

Որսորդութիւնն յալող անցաւ, քառասուն հաս սպաննեցի: Մ'նացածները վաղը:

Եւ քանի մի անգամ յօրանցելէ յետոյ, զնաց երկնցաւ հանգատեան անկազնոյ մի վրայ, աշքերը զոցած, մեղկօրէն ընկմած կէս քնոյ մէջ, պղնձեայ եռուտանիներէն ելլած քաղցը բուրումները հոտուելով:

Ստեփանոս աշքէ չի կորսնցուց զնա:

— Ղուկ, կեօարն կը մրաիէ, ըսաւ իրեն Պարթենոս: Ա՛հ, եթէ ամէն հռովմայեցի կարենար տեսանել զնա ինչպէս ես կը տեսանեմ, ո՛ւ և է երկիւզ անհեա պիտի ըլլար: վասն զի սա շատ նուասաւ է իւր աղասա զրելոց և գերեաց առջեւ:

— ինչո՞ւ:

— Որոշնետե զի՞նքը շատ մօտէն կը աեւնեն :

Մտեփանոս իւր ցուցամատը շրթանց մերձնելով՝ լոռվթեան նշան ըրաւ իւր բարեկամին, վախնալով որ մի՛ գուցէ խօսակցութիւննին լսուի : Նոյն միջոցին, դումետիանոս իւր ապատաղըր կանչեց :

— Պարթենո՛ս, մոտիկ օրէ՛, ըստւ, երբսա իրեն ներկայացաւ :

Պատրաստ եմ՝ հրամանացդ հնազանդելու, կեսար, պատասխանեց Պարթենոս խոնարհեւլով :

Դումետիանոս պահ մի վարանեցաւ, բայց աւելցուց,

— Կը ճանչնաս կուռնելիս քրմուհին ։

— Հանգոցեալ Փլափոս Սարինոսի գումարը. այս կը ճանչնամ :

— Լաւ, կուռնելիս ինծի շատ. հանցանցաւ. Կ'ուզեմ որ նա ըլլայ... թերևս կայսրուհի :

Այս խօսքերս ըսելով սոքի ելաւ, դէմքն սպեռուած, և սենեկին երկայնութեամբ սկսաւ քայիլ : Պարթենոս իրեն նայեցաւ և բաց, որովհեաւ իւր արիսջ պէս ապականեաւ ըլլալով հանգերձ, գաղտնի զզուանք մը կը դզար Վեստայի քրմունուց մի վրայ այսօրինակ բան մը լսելուն համար ։

— Ըստած չի լսեցի՞ր, ըստւ կայսրն առ զիմաց կենալով :

— Կեսար, հրամայեցէք ի կը հնազանդիմ, պատասխանեց Պարթենոս մեղմ ձայնով մինչև գետին իունարենով :

— Հրամայելիք բան չունիմ, պարզ խորհարդ մ'էր բասաւ, ԶԵ՞ս կրնար ինձ միջոց մը ցուցնել՝ ինչպէս արիշ շատ անգամ :

— Այս ասեան իննդին Վեստայի քրմունուց մի վրայ չէր, և հասմէւական օրէնքն մահաւան կը զատապարտ ։

— Լոէ՛, հետո այլպէս մի՛ խօսիր, ի՞նչ բանի կու զան օրէնքները, խօսքը կարեց կայսրն սոքը գետին զարնելով :

Պարձեալ երինցաւ անկողնյն վրայ, և աւելցուց աւելի հանգարաւթեամբ.

— Այս իրիկուն, մուժ ատեն, հետա Վեստայի տաճարը պիտի դաս. կարելի է թէ չի տեսնեմ զկաւանելիս, սակայն պիտի

շանամ իրեն հանդիպիլ... վաղը կ'երթամ շատառածուհին պատուելու... Միակ անձն որ ինձ քիչ մը զախ կ'ագգէ, և կայսրուհին, ժամանակէ մ'ի վեր կը լրտեսէ զախ :

— Աւգուստուհին զքեղ շատ սիրելուն համար կասկածու է և նախանձու :

Դումետիանոս յօնքերը ամփոփեց. շատ չէր հաւատար Դոմետիայի սիրոյն. բայց անբացարտելի զզացում կը կապէր զի՞նքը այն կոչ հետ, որ իրեն հետ ամուսնանալու համար ձգած էր իւր տոաջին ամուսինը, անոր համար կայսրը կը զախնար անոր բարձրութենէն ։ իւր այլըլլութիւնն, որ պահ մի հանգարաւած էր, աւելի սասակացաւ. Պարթենոսի վերջին խօսքերէն :

— Վերջապէս, ըստւ վայրկենական լուռթենէ յետոյ, առանց ծերակուտին և ժողովրդեան ս'վ է Դումետիա... Բաց յաստի ծերակոյան արգելք չէ կարող լինել կուռնելիսայի հետ ամուսնանալու ։ Մի՛թէ ես չէմ դակիացները և Գերմանները նուաճողը, մի՛թէ իմ քաջութեամբ չէր, որ հոսովէական արծիւններն բարբարոս ազգերը ընկճեցին ։ Գալույ ծաղովլրգեան, նա կը սիրէ հանգեստը, և արդէն իսկ իմ ծափրովս բազմապահեցի անոնց թիւը, աւստի, քանի որ ես զի՞նքը կը զուարճացնեմ, թո՛ղ հանգիստ ձգէ զիս :

Պարթենոս գեռ ևս լուս կեցած՝ կը մըտածէր կայսեր խօսքերուն վրայ, կը մոտածէր այն շինծու յաղթութեանց վրայ, որով կը պարծէր, մինչդեռ սոփակուր էր ասօնթալից հաշտութիւն մ'ընելու դակիացոց հետ, և որ աւելին է, սափեր էր զծերակյաց՝ որ յաղթանակի հանգէս ընէ իրեն համար ։

— Ի՞նչ կը մատես, հարցուց Դումետիանոս, ազատազգին լուռթենէն զարմացած :

— Կը մոտածէի, կեսար, որ կայսրութեանց սկիզբը, մասուի կասկածի մը համար, մահաւան զատապարտեցիր Հոկիելլանուէ և վերանիլլա քրմուհիները, պատասխանեց Պարթենոս, վախէն համարձակութիւն առած, քաջ զիտնալով որ Դումետիանոս իւր անուամբ գործուած ոճին համար իւր արբանձակները կը զատապարտէր, որպէս զի բալորովին անոնց վրայ ձգուի յանցանքը :

— Հոգիկելանտէ և վերոնիշլա ինձ հաւնայ չեին, ըստ ձեռքերը շփելով, և ասկայն եթէ կը յիշես, անբացատրելի վեհանձնութիւն մ'էր ըրած, ձգելով որ ուզածնուն պէս մեռնին: Անա արևն դժո նոր իր ըրբանին կէսը հասա... ո՛հ, ի՞նչ զանդազ և միօրինակ կ'անցնին ժամերն... Այս առաւտեան որսորդութիւնն յոգնեցուցի եղաւ, ո՞ն ուրեմն, քիչ մի շարժի օգտակար պիտի ըլլայ, կ'ուզեմ զաւիթ եւնել:

Եւ Պարթենոսի հետ գուրս եղաւ:

Հազիւ թէ հեռացաւ, արձանի մը ետև պահուած գնակ մը կամացով մը բացուելով երկու կանայց ներս մտան: Ասոնցմէ մին էր Դումետիա Աւոստուհին, միւսն Փլաւիտ Դումիայա, կայսեր քոջ աղջիկն:

Դումետիա զարմանայի գեղեցկութիւնն մ'ունէր: Հազած էր ծիրանի եղերքներով զինստ մը, դրայէն այլ երկայն վերարկուն՝ որ ոսկեայ օղակով բռնուած էր ուսին վրայ: Ճակատին վրայ բարձրացած սեւա և առաս մազերն փոքր խոսպիլիքներով պասկ մի կը կազմէին, պարանոցն զարդարուած էր անզին գոհարներով: Իսկ Փլաւիտ Դումիաիլլայի հազուսն ամենասպարզ էր:

Կայսրուհին արագութեամբ սենեկին մէջ տեղ յառաջացաւ, և կատաղութեամբ ոսքը գետին զարնելով դոլեց.

— Կիհող ամէն բանի տեղեակ է: Ջդուշացի՛ր, Դումետիանոս, այլ չեմ կրնար քեզ համբերել:

— Հանգարանէ, քոյր իմ, ըստ Դումետիլլա քաղցր ձայնով:

— Դո՛ւ միշտ հանգարատութեան վրայ կը խօսիս, դո՛ւ որ սիրելի ես ամուսնոյ: Կը տեսնուի որ չես լսած կայսեր խօսքերը, անօրէնը կ'ուզէ Վեստայի կուսանաց միոյն հետ ամուսնանալ:

Դումիաիլլա այս բանիս զարմանք յի յայտնեց:

— Ո՛չ թէ իւր սիրոյն առարկայն է զիս սարսափեցնողն, այլ նոյն ինքն այդ սէրն, անցլուց նաև, որովհետեւ ո՛ւ և է վաս սէր ծանր սիօլ մ'է:

Դումետիա յի պատասխանեց, բայց իւր գէմին զժկամակութիւնը լաւ յայտնեց թէ

շատ չէր ախորժեր Դումիաիլլայի բարոյականին: Սենեկին մէջ պահ մի մեռելային լութիւն տիրեց. ապա զայն ընդհատելով նախ Փլաւիա,

Քեզ հետ ես այլ կը ցաւիմ գժրադդ կուսին վրայ, ըստ Դումետեանոսի կողակցին՝ անոր ձեռքը սեղմելով:

— Անշաշտ կը ճանչնաս զնա:

— Անոնն անզամ չեմ գիտեր:

— Շատ լաւ, եթէ կ'ուզես ուրեմն անոր անունն գիտնալ՝ է կուռնելիս Սարինա:

— Փաւստոյայի գուտորը, գուցեց Դումիալլա տժգունելով:

Իւր այլացլութեան մէջ մոռնալով Դումետիայի ներկայութիւնը, և ձեռքերը միացընելով մրմթից:

— Որդի՛ Ասոտուծոյ, պաշտպանէ զիս, որպէս զի կարենամ զնա ազատել:

— Ի՞նչ է այդ նոր աստուածութիւնը զոր յօգնութիւն կը կոչես իմ առելոյս, հարցոց կայսրուհին նեղորտութեամբ:

Դումիալլա յի լսեց, կը մտածէր կուռնելիայի վրայ, մացէն կ'անցնէր թէ Անիկետոս այս ամեն բաներս կրնար իմացնելի իրէն, և առանց ես ուզ կնելու կայսրուհոյն, անմիջապէս եղաւ սենեկէն:

Թշուան Դումիաիլլա, ժամանակէ մի վեր խելքը զլուկով չէ: ասարօիննակ և անհասկանելի բառեր կը փախչին շրթունքներէն, ըստ Դումետիա զթալից շեշտով: Բայց ի՞նչ շահ ինձ հոգի ուրիշները հոպակէ, ուրիշ մըտածմանները կը տանձին հոգին... Այլ զիս չես սիրեր, ո՛վ Դումետիանոս, բայց ես չեմ ուզեր արտաքինի պալատէդ: կը ճանչնամ սիրող և չեմ վախնար քեզմէ:

Եւեռոյ ջանձաբար խնդալով՝

— Քրմուհի՛ ըստ, գեղեցկութիւնն զերեզմանի մը մէջ պիսի խամրի, եթէ ականջ կախես էրկանս շղոսմէ բառերուն: Անոսարակոյս չես զիտեր որ Դումետիանոս իւր զաւկիցները կորսնցնել սոլիստին ըրած է:

Այս խօսքերս արտասանելով, միշտ բարկութեամբ, մասեցաւ սեղանին, և մեռած ճանճերը տեսնելով:

— Ցեսէք, ի՞նչ զբաղմուցներով կ'անցնէ իւր ժամանակը աշխարհիս աէրն, որ միշտ կը

պարծի իւր ծիծաղարծ յաղթանակներով, ըստ դանաւթեամբ : Խեղճ Հոռվմ, մեծաւթեանդ փայլն օր ըստ օրէ կը խաւարի, զըլուփի Տիւբերիոսի և Ներանի անգմթութեանց առջև խոնարհելու է վեր :

Յանկարծ խօսքը ընդհատեց, գունատեցաւ
և սարսափահար պիսաւ իւր շորջը զիտել։
Դոմիտեանոսի ոտնաձայնն կը լսուէր. կայս-
րուհին հաղիւ ժամանակ ունեցաւ փախչելու,
որովհետեւ, ճիշդ այն պահուն յորում գուռն
իւր վրայ կը դոցուէր, Դոմետիանոս, խանջ
իւր շրջապայտթենէն, ներս կը մտնէր ան-
կողնայն վրայ երկնալու համար։

Երկար տաեն այնպէս մնաց, անշոշա
պարսաւելի մոտածութեան մէջ ընկղզմած էրը
արեգական յետին ճառապայմներն կ'անհե-
տանային անոնչն հորիզոնին ետք, իւր նըն-
ջելու սենեակ զնաց, հանեց հագուստները, և
ինքընդնյա յանձնեց իւր զերեաց, որք անու-
շանու իւզերով օծեցին իրեն մարմինը, ի-
րիկուան սեղանին համար ճակատին օտար
երկիր ծաղկներէ հիտուած պուակ մի զնելով:

Դարձեալ հազուելով, սեղանատօն անցաւ :
Ազնիւ փայտէ կըոր սեղան մը, փիդ մը
ներկայացնող փղոսկրեայ մէկ սոգի վրայ
յենած, սեղանատօն մէշտեղ գոռած էր :
Ճ'երմակ բրդէ գորդ մի սփռուած էր վրան,
և առաջին սպասն, որ Պիւթազորի ամենա-
եռանցուն աշակերտին ախորժակն անգամ կր-
նար բերել, կը շըջապատէր դիզին մարմա-
րեայ արձան մի և Սազոնսայի մեծ հողա-
մանները որ կը պարունակէին քիսոփ և Փա-
լերինոյ անտյ գինիները և Անկողինն արծա-
թազարդ փղոսկրեայ էր ծիրանի բարձերով։
Կայորն մեղկութեամբ տարածուեցաւ վրան,
և անտարբեր աչօք նայեցաւ իւր տոնին գոռած
համեղ մաեղէններուն և իր ամեն բան զի-
տեց, նշան մ'ըրաւ, և սպիտակազգեստ ու
ծաղկապսակ բազմաթիւ գերիներն փութացին
վերցնել առաջին սպասը երկորդը բերելու
համան :

Դամեւի հանոս ո' և է կերակերդէնի ձեռքը
չի պացուց. սնոտի հպարատթեամբ իւր զըլ-
խաւոր ճաշը առաւօտուն կ'ընէր, որպէս զի
հրափրեալց իւր սակաւապիտութիւնը գտնին:
Այս, որոցինեան ուզած էր մինակ ըրյաց այն

իրիկունը, որպէս զի մոտածմնելքը չի խանգամ-
թեն, սեղանն երկար չի տևեց, հազի կայսրն
աշց մի նետեց երկրորդ սպասին վրայ, և զայն
այլ վերցնելով երրորդը բերին: Արմաւներ,
նուշեր, պիտուկներ և եղանակին յարմար
պտողներն ճարուարութեամբ շարուած, սիրուն
տեսք մը կ'ընծայէին: Դումետիանոս մի քանի
նուշ կերաւ, շրթանց մօտեցոց իր քաղկե-
րունեան փառաւոր բաժակը, և իբր ըրած աշ-
խասութենէ մը յորնած, ինկաւ բարձերուն
վրայ և աչքերը զօրեց:

Գերիներն՝ անշարժ կեցած չնշառութիւն-
նին կը բանէին կայսեր քունը չի խանգարե-
լու համար։ Սակայն նև չըր քննանար, չար
փորհուրպները իւր միտքը կը յոգնեցնէին։
Առաջի քիչ մը յետոյ ելաւ Պարթենոսի հետ
խօսելու՝ զոր կանչել տուեր էր։

ՄԵԿ ժամ վերջը, երբ վերջապսյն տեղի
տուաւ մութ գիշերուան, Սաեփանոս, սպա-
սարկուն, որ իւր ափբունքյն հրամանաւ ըզ-
կայսրը կը լրտեսէր, տեսաւ անոր պալատէն
ելնել և հեռանալը Պարմենոսին հետ-
կայօրն ընտանութեամբ յենած էր իւր մը-
տերմին բազկին. երկուքն ալ լակեսնա (la-
cerna) կոչուած մեծ մերարկուներու մէջ
փաթթուած էին. կայսրն միշտ մի և նոյն
վերարկուն կ'առնոցը վրան, երբ չէր ուզեր
ճանացուի :

፩፻፭፻፯፻

ԱՐԴԿԵՏՈՎԻ ՏՈՒՆԸ

Աշնան գեղեցիկ երեկոն մ'էր : Անամզ
երինից վրայ ասաեղք կը ցոլային, երբ Դո-
մետահանոս. Ե Պարթենս հեռացան վետայի
բակէն, որ պահ մի կանգ առած էր կայսրն
զեռունելիս շրջապատող պատերը զիտելու :
Դոմետահանոս երազ երազ կը քալէր, առանց
գնացած տեղույն ուշ զնելու, իրսէ անբաժան
էր Պարթենս, որ կ'անիծէր իւր սրտէն
կայսերական քմահանցը՝ որ ասիսկեր էր
զինքը դատարկ որովայնով Պալատինեան բըլ-
էն հեռանայու :

Անցան վելաբրեան հրապարակէն, և քիզ

մայլ քաղելէ յետոյ, Սերվիսա Տուղղոսի Այրական Բաղդին նուիրուած տաճարին առջն հասան :

— Ո՞վ Բաղզ, յաջող եղիր մեզ, զոշեց Դումետիանոս՝ գալիքին յոնիքական տասն և մէկ սեանց նայելով, որբ տաճարին պարզ և գեղեցիկ ճարտարապետութիւնը դուրս կը ցալծ կեցնէին :

Յետոյ ճամբան առաջ տարաւ և իւր ա զատագրոյն զառնալով,

— Կուռնելիայի ընտանիքը կը ճանչնաս, այնպէս չէ, ըստ :

— Փլաւիս Սարինսի ազստագրերէն մին բարեկամա ըլլալով՝ շատ անզամ ինձ տեղեկութիւններ կու տար իւր տեարց վը բայօք : Կուռնելիս ոչ հայր ունի և ոչ մայր . Փլաւիս երկար տարիններէ ՚ի վեր մեռած է, և Փաւստող իւր զատեր վեստեան կու անաց կարզ զատուելէն մի քանի ամիս վերջը մեռաւ : Դեռասոի օրիորդն ազգական մը միայն ունի :

— Անտան ի՞նչ է :

— Սեքսասո Սարինսո :

— Կը ճանչնամ զինքը : Ուշ կամ շուտ, պիտի կարեմ անոր սսկեղինիկ թեսերը, որպէս զի շատ չի թոշախ իմ շուրջս :

Կերպին շատ չեմ հանած, և աշքերուն մէջ այնպիսի յանզպնութիւն մը կը ցոլց՝ որ զայրոյթս կը դրդէ :

Այս խօսքեր ըօթէլ յետոյ, Դումետիանոս եւս գարձաւ, և ձեռքը բերնին տանելով՝ իրը հրաժեշտի ողջոյն, դէպ ՚ի Պալատինեան կամուրջը դիմեց :

Այս կամուրջ շատ հին էր, և շինուեցաւ Փոլիմոսի և Եմիլիոս Լեպիդոսի հիւպատոս ընտրուելէն յետոյ : Յետոյոյ կաւակիցը կ'ուզէին որ կամուրջն Եմիլիեան կոշով, այլք Սենատորի . բայց Պալատինեան անունն ամենայարձար թուեցաւ :

Մարդ մը, կամբջին պատին յենած, Տիբերիսի դեղնապայն այրինները կը դիմէր : Նորիկներուն ուսնաձայնէն զուիր զարձուց, և որշափ որ միթսմիւնը կը ներէր՝ սկսաւ հետաքրքրութեամբ զիսել զանոնց, և տեսաւ որ բարձրահասակ երրորդ անձ մը առջի երկուցին կը հետևէր :

Այն պահում յարում Դումետիանոս և Պարթենոս կամբջին մէշտեղն կը հասնէին, ուրիշ գիշերային շրջապայող մը, որուն քալուածքէն յայտնի էր զինով մ'ըլլալը, շիտակ դէպ ի ասոնց կը մօտենար և կայսրն ուրիշին ճամբայ տալ չէր վորժած՝ առանց շեղելու շարունակեց ճամբան՝ յուսալով որ անծանօթն մէկի պիտի երթար իրեն չի զարնելու . համար ։ Բայց գործն այսպէս չեղաւ, նորեկն բազուկով այնպէս ուժովմը հրեց վկայութը՝ որ քիչ մասց գետին կ'ինկնար :

— Ցեղ տուր ինձ, գոչեց խղդուած ձայնով, չե՞ս տեսներ, արդէն պատկան կը զառնայ, և եկեր ճամբառ վրայ տնկուեր արգելք կ'ըլլաս :

Թէպէտե Դումետիանոս թուլացած էր ծուլութեամբ, ասկայն բարկութենէն բոլոր իւր կորովը վերստացաւ : Գետին զպրեց եղկելին որ հազիր կարող էր ոսքի վրայ կանգուն կենալ, և դաշոյնն առաւ զարնելու համար, բայց զայն անշարժ տեսնելով,

— Գետը նետէ այս անպիտանը, ըստ առան անզիթեամբ . թո՛ղ երթայ պատմէ Պդուատոնի թէ ի՞նչ ուժով զարկաւ ինձ :

Պարթենոս ծուեցաւ, և վեր վերցնելով եղկելին՝ մէկ կողման մօտեցաւ իւր ծանր բեսան հետ . բայց նոյն պահուն, բարձրահասակ մարդն որ կայսեր ետքէն եկած էր, վրան յարձկեցաւ, սեղմեց անոր կոկորդը և ստիպեց որ վար զնէ իւր բեռը ինքզինքը պաշտպանելու համար :

Ահաւոր կուր մ'էր որ սկսաւ . ՚ի զուր Պարթենոս շանաց իւր զաշոյնը ձեռք առնուզ, բայց հակառակորդն ժամանակ չի ձգեց : Դումետիանոս կուսոյն ցուրտ հանզիսատես մ'էր : Փաշաստութիւնն աշխարհիս իշխողին առաջին յատկութիւնն չէր, այս պատճառաւ, փոխանակ իւր ընկերոջ օգնելու, կամաց կամաց հետացաւ, սրտանց անիծելով շատառածները և իւր շուրջը օգնութեան կանչելու . մէկը փնտելով : Բայց կամուրջին մօս ոչ ոք կար այն անձն, որ սակաւիկ մ'առաջ գետը կը զիսէր՝ պահուըտած էր քիչ մ'անզին, և Դումետիանոս, փոխանակ կուսոյն տեղը զանաւաւ, վազելով փախաւ . որուն իյնալը աեսէր էր :

Պարթենոս, զօրաւոր հարուած մ'ընդունելով
քունքին, անշարժ փոռած էր անծանօթին
քով, որ քիչ մասց կայսեր անզթութեան զոհ
պիտի երթար, յաղթականն անտարբերու-
թեամբ երկոցն ալ կը զիտէր: Յանկարծ,
մէկը զարկաւ իւր ուսին, և լսեց մեղմ ձայն
մը՝ որ ականջէն կը փըսիար.

— Կամաց, եղբայր. մէկը ազատելու հա-
մար հարկ չէր միւսն ազանել: Արդ, օգնէ
ինձ. տեսնենց պիտի յաջողինց զանոնց կեն-
դանացնել:

— Ի՞նչ բանի կու գայ մեռած կամ ողջ
ըլլալնին. ժամանակն ուշ է և անոր տէրն
չեմ: Երկաթեայ լուծ. մը կը կրեմ որ ինձ
անտանելի է:

— Տէրդ չի նեղանար եթէ քիչ մ'ուշա-
նաս, քանի որ հրաման տուեր է որ դուրս
ելնես, ո՞վ Պարիս:

— Անունս ինչէն զիտես, ըստ սուսե-
րամարտն զարմանալով:

— Կը... տեսնուի որ, աչքերդ իմիններուս
պէս՝ մութին վարդ չեն, անոր համար զիս
չես ճանչնար, այս ալ կայ որ մէկ անգամ
միայն տեսած են զիս:

— Ո՞վ ես դու ուրեմն... խօսէ՛, կրկնեց,
Պարիս, անհամերութեամբ:

— Փլորոնիսայի մօրելզայրն:

— Ամիթիթատրոնի ծերունին:

— Այս՝ որ և Անիկետոս կը կոչուի...
բայց փամ խօսքերով ժամանակ չի կորոնցը-
նենց, քանի որ մեր նմանեաց մին մահուան
վտանգի մէջ է:

Անիկետոս Պարթենոսի քով ծունք գնելով
ձեռքը սրտին տարաւ անոր բարախումները
համբեյու: Նոյն պահուն ժողովրամական զատէ
մարդ մը՝ կանթեղ ՚ի ձեռին մօտեցաւ ըզ-
գուցութեամբ, կարծես կորուսեալ բան մը կը
փնտաեր: Երբ երկու մարդինները տեսաւ,
ազարակ մ'արձելեց և փախաւ:

— Փախէ՛ր, Պարիս, ըստ այն ժամանակ
Անիկետոս ոտքի ենիւով:

— Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ, ինչո՞ւ վախցար:

— Որովհետեւ վիրաւորած անձու Պար-
թենոսն է:

— Արդէն զիտէր, պատախանեց սու-
սերամարտն սառնասրտութեամբ:

Եւ մթութեան պատճառաւ իւր դիմաց
վրայի ժակիտն չի տեսնուեցաւ:

— Պարթենոսի ընկերն անշուշտ կայսրն
էր, առաջ տարաւ Անիկետոս զողովուն
ձայնով:

— Բայսանդակ Հովովայեցոց միջէն,
միայն Դամետիանոս իւր մասերիմը չի պաշտ-
ապանելու փատութիւնը կրնար ունենալ:

Որքեմն ինքզինը մասածէ, եթէ կայսրն
քքեզ ճանցաւ կրստած ես:

— Ես չեմ փախչիր, վասն զի եթէ Դո-
մետիանոս իմ մասն կ'ազէ, զիւկաւ կրնայ
զիս գոնել: Կարծես թէ կը սիրեմ կեանքս,
այս գերույ ատելի կեանքը, որ կը սովորէ
սպանել իմ նմանս անկեց չի սպանուելու
համար: Ա՛ն, կեանքս շատ յարդի պիտի ըլ-
լար, եթէ անցանէի հայրեննեացս ազատ ան-
տառաց մէջ. հոս՝ անտանելի բեռ մ'է ինձ
համար:

— Հանդարտէ՛, բարեկամ: այն որ կը
բարձրացնէ զաղցաւը տղմին միջէն՝ իշխան-
ներու և թագաւորներու հաւասարելու հա-
մար, կը գդայ վրազ, և իմ և եղբարցո
աղօթքով իւր չնորդն կը լուսաւորէ զքեզ...
ոչ մահուանէ պէտք է փախնալ և ոչ ալ զայն
փնտուել. բազկացդ մէջ առ այն որ ազնա-
տեցիր և հետեւ եկուր:

Թէպէտն ծերունոյն ձայնն շատ քաղցր
էր, ոակայն մէջն այնպիսի հրամայողական
եղանակ մի կար՝ որ Պարիս աղու պէս հը-
նազանդեցաւ: Վար ծուելով վերցուց վիրա-
սորեալլ և պատրաստ էր Անիկետոսի հե-
տեւելու:

Երերունին քանի մը քայլ առաւ, յետոյ
ետ դառնալով մօտեցաւ Պարթենոսի:

— Զեմ կրնար թողուզ զայս, ըստ,
խաչափայսին վրայ գամուած Ցիրոջս խօս-
քերն թշնամնեացս ներել և զիրենիք սիրել
կը պատուիրեն:

— Մի՛ օգներ իրեն, Անիկետոս, եթէ
երկուքիս այլ կորուստը չես ուզեր, քոշեց
Պարիս:

Ծերունի քրիատնեայն պահ մի մտածեց.

— Իրաւունք սոնիս, ըստ, ազատագիրն,
լոկ թմրած լինելով՝ քիչ ատենէն ինելքը
զովիը կու զայ: Եթէ իմ տառնս տանիմ,

իր վարձատրութիւն իւր կեանքը ազատելուս զիս պիտի մատնէ, և պէտք չէ որ պաշտօնն շտա լմնայ: Կ'արհամարհեմ մահը, բայց դեռ նոր ձեռք տա արօր՝ որ ցամաց երկրի մը վրայ մեծ ժժուարութեամբ պիտի բանայ իւր ակօսը: Մարտիրոսութենէ պիտի չի փախչիմ, բայց զայն պիտի չի փնտուեմ այլ, քանի որ զեր շատ հոգուց պէտք է ցուցնեմ երկնից ճամբան:

Վեր վերցուց զՊարթենոս, պատին կոթընցուց, զրան ձեռք վերաբուն, և սկսաւ ըսել:

— Թո՞ղ ամենակարողն Աստուած զթայ այս անթիւ ոճիներով արատաւորած մարդուն. թող ուղղէ անօր սիրաց և իւր բարկութեամբ չի պատուհասէ զնա: Հիմակ եւ տեւէս եկո՞ւր, Պարի՞ս:

Եներունին մեծաբայլ հեռացաւ. սուսերամարտն իւր ծանր բեռով քովէն կը քայէր: Ետ դարձան, Այրական Բաղդի, վեստոյի և Անահուայ տաճարներուն առջեւն անցնելով: Աւելի վեր եւնելով Աւենտինեան բրլրէն, կողմանի ճամբայ մը բռնեցին և քիչ ժամանակէ հասան այն աննշան արտաքինավ մեծ տուներէն միսյն առջն, որք կողիք (Խոսւաշ) կը կոչուին, և զորս ազնուականներն աղքատաց վարձու կու տան:

Անիկետոս դուքը բաղիսեց, և ահա իսկոյն դուքը բացուեցաւ, և ժողովրդական տարագով օրիորդ մը տեսնուեցաւ, ձեռքը հողէ կանթեղ մը բանած:

— Շատ ուշ կու գաս, հայր իմ, ըսաւ նա երկուս ձայնով:

— Փլորոնիա, թշուառ մի կը բերեմ քեզ, որ խնամոցդ կարօսէ, պատասխանեց ծերունին:

Փլորոնիա կանթեղը վիրաւորեղըն մօտեցաց, բայց բաց ի սուսերամարտին ուսին յենած ու և դուռզ մազերէ ուրիշ բան չի կրցաւ նշմարել:

— Բարի եկար ազատածիզ տունը, եղբայր, ըսաւ նա ճանչնալով զՊարիս:

Պարիս զուկը խոնարից, և Անիկետոս աւելցաց.

— Փլորոնիա, դուսար իմ, զմեզ այն խոցը տար ուր մեռաւ մայրդ:

Փլորոնիա զէպ ի գաւիթը սկսաւ երթալ, ծերունին և սուսերամարտն ալ ետևէն:

Անիկետոսի տան գաւիթն տխուր վիճակի մէջ էր. խոսն բուսած էր քարայատակին բացուածքներուն միջն, բաղեղն և կաղջնակ (acanthe) մարմարեայ սեանց վրայ սիրուն զրասանքներ կը կազմէին:

Փլորոնիա զուռ մը բանալով՝ ցած և նեղ խցի մը մէջ մոռաւ, որուն պատերն կրով ճերմցած էին և յատակն փոքր քարերով զարգարուած: Անկէց անցնելով ուրիշ խոսց մը մոռաւ, առաջինին աւելի պատիկ՝ թէպէս և անոր շատ նման: ուսինից կը բորէր խնկի անցյ հոտն. ասոր զարդերն էին՝ սպիտակ լաթով ծածկուած խորան մը, քնանալու անկողին մը և կոտրած սին մը՝ որուն վրայ զրուած էր հողէ կանթեղ մը:

Տիրութիւն և մաղձուութիւն նկարուեցաւ Փլորոնիայի դիմաց վրայ՝ երր սեմէն անցաւ:

— Ահա հոս մեռաւ սրբակեաց մայրս, ըսաւ Անիկետոսի, ո՞վ է հոս բերածդ:

— Թշուառ և ինամոց կարօտ, մարդ մ'է, ըսաւ ծերունին յանդիմանողական շեշտով:

Օրիորդն, զլուկը ծոելով քանի մը խօսքեր թոքուեց:

Սյոյն միջնցին Պարիս անկողնոյն վրայ զրած էր վիրաւորեալլ, և բաւական ժամանակ զնա զիտելէ յետոյ, զթալից կերպով ըսաւ.

— Կարծեմ մեռած է:

Անիկետոս շտապով առաւ Փլորոնիայի ձեռքէն կանթեղը և մօտեցաւ որ զննէ հիւանդը:

— Աստուած իմ, գոշեց նա, եթէ չեմ սխալիի, այս Սեքստոս Սարինոս պատրիկին է:

— Սեքստոս, մանկութեանս ընկերը, ըսաւ Փլորոնիա, հայր, վիրաւորուած է, աւելցուց յուգեալ ձայնի:

Եւ երիխասարդ Պատրիկին մօտենալով, ձեռքովը մէկի ըրաւ վէրբը ծածկող արիւնաթաթաւ մազերը:

— Հարուածն մահացու չէ, դուսար իմ, Սեքստոս մարած է միսյն, զնա սպեղանին և փաթթուցները բեր:

Դեռաստի օրիորդն հեռացաւ և շուտով եւ կա՝ բերելով բիրեղեայ անօթ մը՝ որուն մէջ բազմաթիւ փոքր սրուակներ կային: Ա-

նիկետոս պատրիկին ճակտին վրայ գորաւոր դեղէ մը քանի մի կաթիլ կաթեցնելով, արխնն առաստովեամբ վաղց, յեաց Փլուոնիա լուաց վերը և ինամծով պատեց զայն:

Մնաց բարեաւ, Անիկետոս, հարկ է ափիթատրոն վերաբառնամ, ըստ Պարիս, իւր ներկայութիւնն անօգուտ դատելով:

Ենթունին չի պատասխանեց, սեան վրայէն առաւ կանթեղը, վառեց զայն, և հրանդի Փլորոնիայի հակովութեան յանձնելով Պարիսի հետ դրս ելաւ:

Ներէ ծերունաց մի անգաղտնապահութեան, ըստ գալթին մէջ կանգ առնելով, ի՞նչ պատճառաւ Պարթենոսի կը հետևէիր:

Պարզ հետաքրքրութեան համար:

Բայց ի՞նչպէս իրիկունները դուրս կրնաւ ենել:

Ամփիթատրոնի վիխաւորն որ կը սիրէ զիս, երբեմն այդ առանձնաշնորհը կ'ընէ ինձ:

Ահ, չես կրնար գուշակել ի՞նչ սրախութիւն կը զայ սիրու երբ ուզած կողմն կ'երթամ: Այն ժամանակ կը մոռնամ երկաթեայ լուծը որ կը կաշկանդէ զիս, և այլ ևս չեմ անիծեր բաղը, որ դրմանա տառապանաց կը պատապարտէ՝ զայլս աշխարհիս ամեն բերկանաց:

Այն ժամանակ կը մատիմ անվոզմակալ բնութեան որ ասեղծեց արևը ամենուս համար, և որ աշրգիկը որ թշուառ մի չի սրանշանաց իւր հրաշալեաց վրայ: Բայց այս երջանկութիւն շատ հազուագիւտ է, այս գերագոյն ուրախութիւնն ատէկ չէ տրուած խեղճ գերայն... Ո՛հ, ճակատագիրն անգութ է և իւր հրամաններն անիրաւ:

Ճակատագիրն Ասուած է, և իւր հրամաններն, թէպէտե անթափանցելի, սակայն արգար և սուրբ են, ըստ Անիկետոս խատութեամբ: Եթէ կեանդք միշտ տևելու ըլլար՝ այն ժամանակ միայն իրաւունք աւնէիր զանգատելու, ո՛վ Պարիս: Բայց կեանցն արագութեամբ կը սահի, և յափուենական երանաւթիւն մը կը պասէ անոնց, որը նեղուիլ գիտեն: Ամենակալին առն ո՛չ թագաւոր կայ, ո՛չ թագուհի և ո՛չ ատրուկ: Ազատութիւնն շատ լաւ է: Բայց շղթաներն նուազ ծանր կը թուին, երբ մոռածենք որ

հոգին միշտ աղաստ է, և թէ երբ ուզէ կըր-նայ սլանալ առ Ասուած: Մի՛ նախանձիր մեծամեծաց և երկրիս հարստաց կարծեցեալ երջանկութեան վրայ, որովհետեւ, վերջին գատաստանի օրը, երբ գտնուին Ասուածոյ գանջից առնել, գատապարտելոց նշանը պիտի փայլէ անոնց մեծամանութեան ճակտին վը-րայ: Ասուած է Ասուած, և ամենահզօր կայսրն, եթէ առաքինի չէ, չորդը պիտի չի գտնէ իւր առնել, մինչզեր ամենանուաստ գերին, եթէ քաղցր և խոնարի էր սրտի, ընորելոց կարգը պիտի դասուի:

Լուսինն որ մեղմիկ հորիղունին վրայ կը բարձրանար, իւր արծաթափայլ ճառապայթ-ներով կը լուսաւորէր գալթին սիւները և ծերառանոյն գէմիք, որ ճակատը վեր բռնած, աշգերն ներշնչեալ և գէպ 'ի երկինք ուղղած խօսյէլի մարգարէ մ'էր կարծես որ Փրկչին գալուաը կը նախատեսէ:

Պարիս ապած՝ երեսը կը նայէր. քրիստոնէին աստուածայինն ճարտասանութիւնն իւր սիրու յուզեց, և արտասունքի կաթիլ մը զլորեցաւ: Իւր տժոյն այտից վրայ:

Հիմկու հիմն ըստածներա անհսկաւանիլի կը թուին քեզ, վրայ քերաւ Անիկետոս, բայց եթէ աղօթքներս հանց անցնին, որ մը պիտի զայ որ համասա...: Ո՛վ ծնած ես:

Աշքերս բացուած են Գերմանիոյ Հեր-

կիւնիս ընդարձակ անտառին մէջ: Հայրս իւր ցեղին պիտուրներէն էր:

Մանկութեան միջոց գերի բռնուելով

Հոռոմ բերին զիս, որ քիչ ատենէն մոռցայ

հարցս Ասուածը և լեզուն, մինչ իսկ ինչ անուն կրելու կազմուածքէս գուշակեցին թէ գորաւոր ըմբիլ մը կրնայի ըլլալ, ուստի զիս կրկէսին յատկացոցին:

Թէպէտե ազատութեանս յիշատակն իսկ

կորսնցուցած էի, սակայն գերութիւնն ինձ ծանր կու գար:

Հատ անգամ, Սպարտակսի պատմութիւնը լսելով, ապստամբիլ մոսածեցի.

Բայց ընկերներս, նեղութենէ բրտացած, չէին հասկնար միտքս:

Օր մը սուսերամարտից կա-

ռավարին օգնականներէն մին յանդնեցաւ

ինձ ձեռք վերցնել, ծանր կերպով վերաւ-

րեցի զինքը, և զատապարտուեցայ կաշեայ

խարազաններով ծեծաւելու.... Այս պատիմ:

իսաշի պատժէն ա'լ տեղի ահաւոր է, որով հետեւ կը հաւասարեցնէ մարդ մի անանոյ : Պատիժու 'ի գործ պիտի զոտէր ամփիթառութնէն դուրս, կելիս լերան կողմը . հոն զնացի անիծելով ջաստուածները ու մարդիկը : Հազիւ հոն հասանք, սպասաւորներով շրջապատեալ պատժարակ մը քուինէն անցաւ : Երկայն և ճերմակ զգեստներ հազած կին մը վար իջաւ անկէց և պիտարիս հետ խօսեցաւ և Աշատ ես պատժէզ, քանի որ գիպուածով վեստայի քրմունոյ մը հանդիպեցար յ բաւ ինձ : Գետին չորեցայ և երկարեցի ձեռքերս նոտ այն կինն որ ինձ աստաւածուհի մը կը թաւէր :

Այն օրէն սկսեալ կենցաղավարութիւնս միշտ նոյնը մնացած է : Անասնոյ նման փակուած ըլլալով ընկերացս հետ և ստիպուած զաննը սպաննելու, կեանքս ինձ անտառնելի պիտի ըլլար, ստանց անխոհեմ բայց քաղցր երազի մի որ մոտաց վրայ կը տիրէ...:

Շատ անզամ խոյացած եմ կրկէսին մէջ մեռներու նպաստակաւ . բայց կուսյն ժամանակ, հարցս արիւնն կ'եռայ երակացս մէջ և միշտ կը զգետներ հակառակորդս : Սակայն, բնութիւնն ինձ բարի սիրո մը տուած է : Ոյժ զիս երևելի ըրաւ, և Պարիսի անունն ուրախութեամբ կը կրկնէ հոռվէական կատաղի ժողովաւրդն : Ո՛հ, փառքս մեծ է . պսակ մը կը կրեմ զիսոյս վրայ, և իմ քաջագործութիւններովս կը զուտքացնեմ հայրենակիցներո :

Սուսերամարտին ցաւազին հեգնութիւնն շարժեց Անկետասոսի սիրտը, և երկուքն այլ իրենց մոտածութեանց մէջ խորասուզուած ըստ կեցեր եին, երբ յած և տուոր ձայն մը հետեւալ աղօթքը սկսաւ միմնջել :

« Գերազայն վարձասորութեանցդ օրը, ո'վ Տէր, մի՛ մոռնար զիս . ա՛հ, մի՛ մոռնար այն՝ որ բոլոր յոյսն վրադ դրած է :

» Միխիթարիչ վշացելոյն, միայն յաւետեսական, միայն սուրբ . սիրտն որ քեզ կը վատահի, կ'ըմրոնէ զքեզ, բայց ո՛չ որ մահանացու կրնայ չափ մի դնել անուռն զօրութեանդ :

» Անհոնութիւն ես զու, զու ես պատճառ և հետեւանք, ամենայն ինչ լի է մե-

ծութեամբդ և աստուածութեամբդ . դո՛ւ ես սկիզբն և վախճան :

» Հայր արլարոց, արհաւիրը չարաց, փայլակացդ զդրպիհնն թագաւորաց ճակատները փողոյն մէջ պիտի խոնարհեցնէ, այն փողոյն մէջ՝ ուր գերիներն իրենց շղթաները կը քաշըլն :

» Դո՛ւ ես յոյս, դո՛ւ որ ստեղծեցիր զիս յաշնչէ, հանեցիր անգունչէն . և որոն խոստացար կեանկ մի բոլոր բերկրանաց :

» Քեզմով կը նեղուիմ, քեզմով կը յուսամ, զի լա կ'ըմրոնեմ՝ թէ երիրիս վրայ աևող երջանկութիւն շիկայ : Կ'ողբամ մեղքերս, սրտմուռթիւնզ կահարեկէ զիս, և փողոյն մէջ ծնրազիր ներողութիւն կը հայցեմ :

» Եւ երբ, կատարեցայ մահկանացու ընթացքս, այլ ես չի տեսնեմ արևոն ծազիլը, երբ յետին ժամուն փողն հնչէ դողովուն ականջներուս քով, պիտի օրհնեմ զքեզ :

» Եւ հուսկ սւրեմն երբ հանգստանաց տրկար և մահացու մարմինս . քանի որ զիս արեամբդ զնեցիր, հոգիս պիտի չի կորսուի խասարապատ զիշերուան մէջ :

» Բայց երբ փողոյն զօրաւոր շաբաշն դղրգեցնէ գերեզմանաց քարերը, ես . այլ պիտի լինեմ . պիտի յանեմ հարցս սոկերաց հետ, և սուրբ անունդ պիտի օրհնեմ :

» Երջանիկ, պիտի հանզիմ բազկացդ մէջ, այն ժամանակ պիտի ընդունիմ վշտացս փոփարէնը, որպիշետե շատ նեղուեցայ :

» Եւ աստուածային կերպարանքդ բարկութեամբ ինձ պիտի չի նայի :

— Ի՞նչ ձայն է այս, հարցուց Պարիս, երբ երգն լոեց :

— Գերի մ'է, որ սուրբ հաւատըն ընդունելէն 'ի վեր շարունակ կ'օրնէն իւր շրջայները : Ինքն ալ մեղանչեց և կրեց, բայց ճշմարիս կրօնից լոյսն իւր միտքը լուսաւուեց, և իւր միակ փափաքն է երկնից երաշանկութեան հասնիլ :

Երբ իրեն թոյլ կը տրուի, կու զայ ազգօթել իւր եղբարց հետ, և կ'երգէ այս երգն որ ինքը շարազրած է :

Սուսերամարտն լուռ կեցաւ, շատ յուղուած էր խօսելու համար :

— Մասս բարով, բարեկամ, ըստ հուսկութեան, եթէ այլ ևս պիտի չի տեսնուինց, հիմակ ընդունէ հրաժշտի ողջոյններ :

— Պիտի տեսնուինք զարձեալ, որովհետեւ Պարթենոս գքեղ չի ճանցաւ. բանէ մը մի՛ վախնար, պատափանանց Անիկետոս մինչեւ դռութ անոր ընկերելով :

Եթուանի քրիստոնեայն երկար ժամանակ սուսերամարտին հեռանալը դիտեց, յետոյ գաւթին հակառակ կողմը քնաց, և մոտաւ այն. խուցը՝ որ գերին վերոյիշեալ ազօթքը երգած էր : Եթուոյ փոքր սանդղէ մ' իջաւ որ Ֆրիայն և նեղ խուց մի կ' պատշաճորդը, և որուն պատերին մերմանակ նկարներով ծածկուած էին : Առաստաղն շատ ցած էր և խորը փոքր խորանի մի վրայ ու փայտէ խաչելութին մը կար. կաէ երկու կանթեղներ որ կը վառէին մեր փրկութեան գործույն քամ, կը լուսաւորէր հոն ժողուած քանի մի անձեր : Մօտակայ քրիստոնեայ ընտանիքներ էին որ ամեն իրիկուն կը հաւաքւէին ազօթքներ ընելու համար. երբ կ' ուուէին պատարագին ներփայ զանուիլ, այն ժամանակ աւելի գոռաշոթեան համար կ' իմնէին գետնալամբանաց մէջ, որ կը կատարուէին քրիստոնէութեան ամենավայ խորհուրդներ :

Ամենցն ոտքի էին, և ձեռքերնին միացած կ' ազօթքէին Ներմեռանդութեամբ. և թէպէտ Դամոկլէսի սրոյն պէտ՝ մարտիրոսութիւնն կախուած էր իրենց գլխուն վրայ, այնու հանգերձ հանդարտ էին և ուրախ :

Անիկետոս յամբարայլ յառաջացաւ, հաւատացեալներն երկուքի բամնուեցան անոր նամբայ բանալու համար. գերի մը ներմանակ քզամիքը. զրաւ անոր ուսերուն վրայ. ձեռքը խնկարոյր բուրվառ մի տարավ: Զորեցաւ նա այն ժամանակ և հնյին ճայինի երգեց Դաւթի սազմաներէն մին: Մէկ ժամէ աւելի այս բարեպաշտ քրիստոնէից ազօթքներն յերկինս բարձրացան, ինչպէս Աստուծոյ հանոյ քաղցր բուրում մի, յետոյ ամենցն ալ զգուշութեամբ գուրս. ելան և հեռացան :

Անիկետոս վերագարձաւ Սեբատոս Սարինոսի խուցը, տեսուա որ Փլորոնիա վերատորելոյն քով ծննդղած կ' ազօթէր :

— Խելքը զուկը եկամ արդեօք, հարցուց քահանայն ցած ձայնով :

— Ո՛չ, թեթև հառաջանց մի հազին եւ լաւ իւր զրթունցներէն, յետոյ այս ահաւոր անշարժութեան մէջ ինկաւ :

— Վերը մահացու չէ. զեռ շատ կրնաց ատպիկ՝ եթէ կայսեր գրէմինզրութեան զո՞ն չ' երթայ :

— Ի՞նչ ըսել կ' ուզես, բացատրէ միաքզ, ըստ Փլորոնիա վախիկուութեամբ :

Անիկետոս պատմեց իրեն, թէ ի' նշպէս պատրիկն գինով իւր տուն գաւնալու միջոց հանդիպեց էր Դամետիանասի և Պարթենսասի, Փլորոնիա անյագ հեռաբրդութեամբ մտիկ կ' ընէր, արտին զգացումներն կը կարդացուին գեմքին վրայ, և իւր աշքերն յակամայս գէպ ՚ի վերաւորեալը կը զառնային :

— Ո՛չ, ի՞նչ աստիճանի հասած պիտի ըլլայ, որ այնպիսի վիճակի մէջ Հռովմանց փողոցներուն մէջ երթէեկի, ըստ նա զզուանօք՝ երբ քանանայն պատմութիւնը լմցուց :

— Միւս պատրիկներէն աւելի չէ անշուշտ, պատասխանեց Անիկետոս ամրութեամբ :

Փլորոնիա անգամ մ' այլ նայեցաւ երիտասարդին և աշքերէն արտասուաց կաթիւներ սկսան հուլ. նա չէր կընար հասկնալ թէ ի' նշպէս իւր մանկաթեան ընկերոջ տեսըն իւրեն սարսափախառն զմթութիւն մը կ' ազգէր :

— Դուստր իմ, արդէն ոչ է, և գու իրիկուան ազօթքը զեռ չես ըրած: Գնաւ, ես կը հնկեմ, ազօթէ և քնացիկ Աստուծոյ հովանաւորութեան ներքեւ :

Վարժած ըլլալով կարօրէն հնագանդելու ծերուայն հրամանաց, Փլորոնիա հեռացաւ, աշքերը խոնարհած, պրպէ զի չի աեսնէ Սեբատոս Սարինոս պատրիկին տժացն գէմքը:

(Եարայարելի)